ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻՆ ՄԱՆԿԱՎԱՐԺ
(Ծննդյան 1400-ամյակի առթիվ)

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Անանիա Շիրակացին եղել է մեծ մանկավարժ. այս իրողությունը շեշտում են այն բոլոր գիտնականները (հայ, թե օտար), ովքեր անդրադարձել են նրա մատենագրական ժառանգությանը: Հետաքրքիր է այն ուշագրավ փաստը, որ իր մի շարք աշխատություններում Շիրակացին իրեն կոչում է ուսուցիչ և ներկայացնում ուսուցողական սեփական մեթոդները: Մեզ ծանոթ է Ա. Մովսիսյանի «Անանիա Շիրակացին որպես մանկավարժ» հոդվածը[1]*, որը լիքն է փաստական սխալներով: Հոդվածագիրը, օրինակ, մոռացել է հենց իր՝ Շիրակացու գրած ինքնակենսագրության որոշակի փաստերը և նրան երևակայության թևերով տանում է այնպիսի քաղաքներ, ինչպիսիք են Աթենքը, Հռոմը, Երուսաղեմը, Ալեքսանդրիան, որոնցում Շիրակացին երբեք չի եղել. «Նա չէր բավարարվում իր ունեցած գիտելիքներով, ուստի ճանապարհորդական ցուպը ձեռքին, ուսման ծարավից տոչորված, իր ուժերի վրա վստահ գնում է հունական գիտություններ ձեռք բերելու,* պրոմեթյան *կրակից իր երկրի համար բաժին հանելու: Շիրակացին գնում է* Բյուզանդիա, Աթենք, Հռոմ, Երուսաղեմ, Ալեքսանդրիա, *ապա* Տրապիզոն*… (ընդգծումը մերն է – Ա. Դ.)»*[2]*: Անանիա Շիրակացին չի եղել թվարկված քաղաքներում, այլ միայն ուղևորվել է Կոստանդնուպոլիս, ճանապարհին էլ, ընդունելով քաջատեղյակ մարդկանց խորհուրդը, մեկնել է Տրապիզոն, ուր ուսանել է Տյուքիկոս անունով գիտունի մոտ ութ տարի, ապա գիտելիքների մեծ պաշարով վերադարձել է հայրենիք:*

1937-ին լույս է տեսել Եղիա Ս. Քասունու «Անանիա Շիրակացի, մեծ դաստիարակը» հոդվածը, որում հեղինակը հիացմունքով է խոսում VII դարի գիտնականի մասին՝ փաստեր քաղելով Եղիշե Դուրյանի «Հայ մատենագրութիւն» (Երուսաղեմ, 1933) գրքում եղած Ա. Շիրակացու ինքնակենսագրությունից և Մաղաքիա Օրմանյանի «Ազգապատում» աշխատությունից[3]*: Ե. Քասունին քաջատեղյակ է իր օգտագործած աղբյուրներին. նա ակնարկում է Սամվել Անեցու վկայությունը Շիրակացու ապերախտ աշակերտների վերաբերյալ՝ առանց մեջբերելու պատմիչի հաղորդածը, որը հետևյալն է. «Աշակերտքն Անանիայի Հերմոն և Տրդատ և Ազարիա, Եզեկիէլ և Կիրակոս երթեալ յԵրուսաղէմ հաւանեցան երկաբնակացն և ի դարձին ոչ ընկալաւ զնոսա ճշմարիտ վարդապետն Անանիա:*

---

[1] *Ա. Մովսիսյան. Անանիա Շիրակացին որպես մանկավարժ.– «Սովետական մանկավարժ», 1940, -11, էջ 93–103:*

[2] *Նույն տեղում, էջ 97:*

[3] *«Հայաստանի կոչնակ» (Նյու Յորք), 10. VII. 1937 (-28), էջ 672:*

Իսկ նոքա ուր հասանէին, զնա ասէին պատճառ հայհոյութեան, զոր մի ոք իշխեսցէ ասել կամ հաւատալ»[4]:

Անանիա Շիրակացին հայրենանվեր գործիչ էր. նա զգում էր, որ Հայաստանում մաթեմատիկան զարգացած չէ, դրա համար էլ ձեռք բերած գիտելիքներով գրում է թվաբանության դասագիրք՝ չորս գործողությամբ: Հետաքրքիր են ամեն մի գործողության աղյուսակներին կցված բացատրությունները, և արժե դրանք մեջբերել՝ գիտնականի մանկավարժական հմտությունը տեսանելի դարձնելու համար: Շիրակացին իր աղյուսակների նախաբաններում ունի մանկավարժական այնպիսի մտքեր, որոնք այսօր էլ խիստ արդիական են: Նա կարևորում է ուսուցչի և աշակերտի անհատական շփումը՝ «ուսուցչի կենդանի ձայնը», երևույթ, որ այսօր էլ արդիական է, հետո հիշեցնում է, թե ինքն ասելիքը համառոտել է, որպեսզի կրկնողությամբ ձանձրույթ չպատճառի, նաև հստակեցրել ու պարզեցրել է իր մանկավարժական մեթոդները, որպեսզի աշակերտները խոր ու հանգամանալի յուրացնեն գիտելիքները: Մեծ մանկավարժը բացատրում է, թե սկսում է ցածրից ու պարզագույնից և գնում է դեպի բարդը՝ հաշվի առնելով մանուկների և հմտություն չունեցողների զարգացման մակարդակը. «Պատճառ վարկանիմ, ո՛վ սիրողք իմաստութեան և որք իմոյս էք ցանկացեալք գիտութեան՝ արձանացուցանել ձեզ զջանս նախնեաց զարուեստ համարողութեան, որ իբրև ի կենդանի ձայնէ ի բարի ուսուցչէ: Ուսուցանիջք իմոց գծադրեալցս թէպէտ և կարճառօտ կարգեցի զսակաւս ի բազմաց, զի մի՛ ձանձրոյթ ձեզ զյաճախելն առնիցիմ սուղ և հեշտաւրինեցի զնախնեաց գիրս, որպէսզի կարող լինիջիք յայսցանէ և զյոգունս իմանալ և զբովանդակն: Եւ արդ սկսանիմ ի կրտսերագունէս և ի ծանծաղագունէս ասել զպրակս մանկանցն և զանհմտագունից»[5]:

Շիրակացու ինքնակենսագրությունը, ինչպես նկատել են հայ միջնադարյան գրականության այդ եզակի հուշարձանը հետազոտողները, ունի կարևոր արժեք հայ մանկավարժական միտքն ուսումնասիրողների համար: Ինքնակենսագրությունը որոշակի պատգամ է հետագայի հայ մտավորականներին, թե ինչպիսին պետք է լինի գիտությանն ու կրթությանը նվիրված անձը: Առաջին նախապայմանը դժվարություններից չերկնչելն է, որովհետև խոր գիտելիքներ ունենալու և առավել լայն աշխարհայացք ձեռք բերելու համար պետք է լինել համառ ու անկոտրում: Պատահական չէ, որ Շիրակացին ինքնակենսագրության մեջ մանրամասն պատմում է իր պաշտելի ուսուցչի՝ Տյուքիկոս Տրապիզոնցու դեգերումները ուսման մեջ կատարելագործվելու նպատակով: Պարզվում է՝ վերջինս իր հանրագիտակությունը ձեռք է բերել ուսանելով VII դարի կրթական նշանավոր կենտրոններում՝ Ալեքսանդրիայում, ուր ուսանել է երեք տարի, Հռոմում, ուր սովորել է մեկ տարի, ապա մեկնել է Կոստանդնուպոլիս, ուր նշանավոր իմաստասերի մոտ երկար ուսանելով՝ վերադարձել է իր ծննդավայրը. «Գնաց ողջեցեալ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ: Եւ արարեալ անդ ամիս մի՝ փոխեցաւ յԱղեքսանդրիա: Եւ ամս երիս կայր անդ ի հրահանգի: Եւ

---

[4] *Մ ա մ վ ե լ Ա ն ե ց ի. Հաւաքումն ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 85:*

[5] *Ա. Գ. Ա բ ր ա հ ա մ յ ա ն. Անանիա Շիրակացու մատենագրությունը: Ուսումնասիրություն, Երևան, 1944, էջ 210:*

ապա չոգաւ ի Հռոմ և արարեալ անդ տարևոր ժամանակս, գայ ի Կոստանդնուպալիս և գտանէ անդ այր երևելի, որ վարդապետէր իմաստասիրաց քաղաքին: Եւ եկաց առ նմա յուսման ամս ոչ սակաւս և կատարեալ իմաստասիրութեամբ դարձաւ ի տեղի իւր»[6]:

Թվաբանության դասագրքի երրորդ գլխում Շիրակացին բացատրում է, թե գիտության համար սովորողն ու հետազոտողն իր համառ աշխատանքով է հասնում դյուրըմբռնելիությանը. «Ճանապարհ հորդեալք ընդ թիւդ ընթացարուք համարձակ ընդ որ ես ձեզ տարածանեմ իբրև գալիս լուրթս և ցածունս առաջի դրոմն նաւուց, որք ի զեղլոյս են անհոգացեալք, զի անդադար աշխատութեամբ դիւրըմբռնելի լիցի շահն»[7]: Այս դասագրքում անգամ երևում է Շիրակացու գիտական ոճի գրական պատկերավորությունը. «ինչպես բաց կապույտ և մեղմիկ ալիքները արագընթաց նավերի առջև, որոնք անտարբեր են հոսանքի նկատմամբ…» համեմատությունը առավել տպավորիչ է դարձնում աշակերտի նվիրումը, որը պատրաստ է հանուն գիտելիքի հաղթահարել ամեն մի դժվարություն:

Անանիա Շիրակացին էլ աշխարհի բոլոր մեծերի նման սովորելու խնդրում չի տեսնում տարիքային սահմանափակում: Նա իրեն համարում է մեծ նորարար, որը համարողական արվեստը բերեց Հայաստան, որովհետև նրա կարծիքով առանց թվերի ոչինչ չի հիմնավորվում. «Յոյժ կարաւտեալ արուեստի համարողութեանն, խորհեցայ, եթէ ոչինչ յարմարի առանց թուոց՝ մայր կարծելով ամենայն իմաստից»[8]: Որպես նորարար՝ Շիրակացին մաթեմատիկայի ու բնական գիտությունների բնագավառի իր ձեռքբերումները մտածված ձևով փոխանցում է ոչ միայն դպրոցական տարիքի անձերին, այլև բոլոր նրանց, ովքեր կկամենային ձեռք բերել այդ գիտելիքները. «ասել զպրակս մանկանցն և զանհմտագունից»: Տեղին է հիշել. անգլիացի դրամատուրգ Թովմաս Միդլտոնն ունի մի ասույթ, որը հավերժորեն չի հնանա. «Մարդը երբեք ծեր չէ սովորելու համար»[9]:

Իր ինքնակենսագրականում Շիրակացին նկարագրում է, թե որ գիտաճյուղերին վերաբերող գրքերին է ծանոթացել ուսուցչի՝ Տյուքիկոսի մոտ. «…զի ամենայն կայր առ նմա՝ յայտնիք և գաղտնիք, արտաքինք, արուեստականք և պատմագիրք, բժշկականք, ժամանակագիրք և զի՞ ես մի մի անուանիցեմ, քանզի չիք ինչ գիրք, որ առ նմա ոչ գտաներ»[10]: Այս թվարկումը նշանակում է, թե Հայաստանում բացած իր դպրոցում նա առաջնորդվել է Տյուքիկոսի սովորեցրած մեթոդներով և օգտվել է նրա ուսումնական ծրագրերից, որն իր ժամանակի բյուզանդական դպրոցի առաջատար թևի պահանջն էր: Այս երևույթը սպառիչ բնութագրել է Նիկողայոս Ադոնցը. «Հայ կյանքի վրա բյուզանդական կրթության ազդեցությունը և ընդհակառակը՝ հայոց տեղաշարժը դեպի կայսրություն, թեև տարբեր

---

[6] *Նույն տեղում, էջ 208:*
[7] *Նույն տեղում, էջ 214:*
[8] *Նույն տեղում, էջ 206:*
[9] Read and Speak, M., 1973, p. 40.
[10] *Նույն տեղում, էջ 208:*

կողմերից, բայց տանում էին դեպի միևնույն նպատակը՝ դեպի մշակութային հավասարեցում»[11]:

Դպրոցական նոր ծրագրի խնդիրը XI դարի առաջին կեսին առաջադրել և կիրառել է նաև հայ իրականության մեկ այլ մանկավարժ, գիտնական, մատենագիր, պետական գործիչ Գրիգոր Մագիստրոսը, որը հատուկ նամակով դիմել է Պետրոս Գետադարձ կաթողիկոսին ու խնդրել թույլատրել գիտական շրջանառության մեջ դնել Անանիա Շիրակացու գործերը[12]: Մեկ այլ նամակում, որը Մագիստրոսն ուղղել է իր աշակերտներ Բարսեղին ու Եղիշեին, ներկայացնում է ուսումնական այն ծրագիրը, որն ինքը մշակել է հայկական օրինակելի դպրոցների համար: Դրանց համար Գրիգոր Մագիստրոսն առանձնացնում է չորս պարտադիր առարկա՝ մաթեմատիկա, երաժշտություն, երկրաչափություն, աստղաբաշխություն, և ասում, թե ինքը դեռևս պատանի հասակից հետամուտ է եղել արտաքին գիտությունների մեջ խորանալուն[13]: Ուշագրավ է, որ Մագիստրոսի այս թուղթն ամբողջությամբ թարգմանել է անգլիացի նշանավոր հայագետ Ֆրեդերիկ Կոնիբերը և զետեղել «Համեմատութիւն հին հայերէն թարգմանութեան եւ բնագրի Արիստոտելի Ստորոգութեան՝ Յաղագս Մեկնութեան, Յաղագս Աշխարհի, Յաղագս Առաքինութեանց եւ մոլորութեանց եւ Պորֆիւրի Ներածութեան» ուսումնասիրության մեջ[14]:

Հեշտ նկատելի են Անանիա Շիրակացու և Գրիգոր Մագիստրոսի ուսումնական ծրագրերի համընկնումները:

Շիրակացու ինքնակենսագրության մեջ աչքի է զարնում օրինակելի աշակերտի՝ դեպի հմուտ ու նվիրյալ ուսուցիչն ունեցած պաշտամունքը: Հայ գիտնականը համոզված է, որ իսկական ուսուցիչն իր գիտելիքներն անձանձիր պարտավոր է հաղորդել աշակերտին, խրախուսել նրան, հիանալ նրա առաջադիմությամբ: Հենց այդպիսի երանելի ուսուցիչ էր Տյուքիկոսը, որը Անանիային սիրեց ինչպես հարազատ որդու, նրա առաջ բացեց իր հարուստ գրադարանը: Տաղանդավոր աշակերտի ու մեծ ուսուցչի հոգեկան այդպիսի կապը շարժում էր Կոստանդնուպոլսի արքունական պալատից եկած աշակերտների նախանձը. «Եւ սիրեաց զիս որպէս զորդի իւր և պարապեաց յիս յամենայն խորհրդոց իւրոց, մինչն նախանձեալ ընդ իս ամենայն աշակերտկցաց իմոց, որք ի դրանէն արքունի»[15]:

Շիրակացին իր ուսուցչին համարում է աստվածատուր էակ, որն ի վիճակի էր հունարեն գրքերը հընթացս թարգմանել հայերեն և դա անում էր այնքան վարժ, որ թվում էր, թե գիրքը գրված է հայերեն. «Եւ թարգմանութեանց այսպիսի ունէր շնորհս ի պարգևաց հոգւոյն սրբոյ, որ իբրև կամէր թարգմանել զգիրս յունարէն գրեալս, ոչ դեգերումն ինչ առնոյր

---

[11] *Ն. Ադոնց. Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում: Քաղաքական կացությունը ըստ նախարարական կարգերի, Երևան, 1987, էջ 237:*

[12] *Տե՛ս Գրիգոր Մագիստրոսի թղթերը, բնագիրն առաջաբանով և ծանոթագրություններով առաջին անգամ ի լույս ընծայեց Գ. Կոստանյանց, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 4:*

[13] *Տե՛ս Ա. Դոլուխանյան. Վիկտոր Լանգլուան հայագետ, Երևան, 2003, էջ 37:*

[14] *Նույն տեղում, էջ 36–37:*

[15] *Ա. Գ. Աբրահամյան. նշվ. աշխ., էջ 207:*

որպէս այլ թարգմանչացն, այլ ի հայերէն ընթեռնոյր լեզու իբրև զհայերէն գրեալս»[16]:

Դժգոհ լինելով իր որոշ աշակերտների անուսումնասիրությունից և առարկաների բարդանալու ժամանակ սովորելը դադարեցնելուց՝ Շիրակացին միաժամանակ խոստովանում է, թե ինքը քեն չի պահում նրանց նկատմամբ, ու եթե վերջիններս կամենան վերստին աշակերտել իրեն, ապա ինքը կշարունակի ուսուցանել նրանց: Կարևորն այն է, որ ուսուցչի ու մանկավարժի իր առաքելությունը նա տեսնում է հայ կյանքի հետագա դարերի համար ևս. «Այլ և զայս անմահ թողում ձեզ, վարդապետք, որք յետ իմ գայցէք յաշխարհս ուսումնասիրացդ և փափագողացդ իմաստից և գիտութեանց»[17]:

Ա. Շիրակացու մատենագրական ժառանգությունն ուսումնասիրող հեղինակները համոզված են, որ վերջինիս երկերն ամբողջությամբ չեն հասել մեր ժամանակները. եղել են կորուստներ, բնագրային աղճատումներ ու փոփոխություններ՝ հանգամանք, որը հատուկ է ոչ միայն հայ հնագույն գրական հուշարձաններին: Ռուս միջնադարյան գրականության մեծագույն գիտակ Դմ. Լիխաչովը նմանատիպ երևույթներ արձանագրում է նաև ռուս հին գրականության մեջ՝ նկատելով, թե ամենից ավելի փոփոխությունների ենթարկվել են աշխարհիկ մատենագրական հուշարձաններն ու առաջին հերթին՝ պատմականները[18]: Շիրակացու երկերի հետազոտող ու գիտակ Ա. Գ. Աբրահամյանը համոզված է, թե ֆրանսիական հայագիտության հիմնադիր Սեն-Մարտենն իր „Mnmoires historique et gnographique sur l'Armnnie" *գրքի երկրորդ հատորում հրատարակել է նյութ՝ «Անանուն հեղինակի չափեր» անունով, որը, սակայն, պատկանում է Շիրակացուն. «Շիրակացու մեզ հասած ու հայտնի տոմարից երևում է, որ անանուն հեղինակի չափական այդ աշխատությունը ո՛չ այլ ինչ է, բայց եթե Շիրակացու տոմարական փոքրիկ հատվածը»[19]: Իրականում Սեն-Մարտենը չի խորագրել վերոհիշյալ չափերին վերաբերող փոքրածավալ գործը, այն առանց խորագրի զետեղված է Մովսես Խորենացուն վերագրվող Աշխարհացույցի նյութի մեջ, և ֆրանսիացի հայագետն այդ նյութին դիմել է* ասպարեզ *բառը (*asbarez*) բացատրելու համար: Դրա համար էլ նա մեջբերում է Անանուն հեղինակի գործից մի հատված, և իր կարծիքով այդ հեղինակն ապրել է XV դարում: Ըստ Սեն-Մարտենի՝ Անանուն հեղինակի երկի այդ հատվածում առկա են հայերի պատկերացումներն աստղագիտական ու երկրային չափերի վերաբերյալ[20]: Անանուն հեղինակի չափերին վերաբերող հատվածը մեջբերվում է նախ հայերեն, ապա թարգմանաբար ֆրանսերեն: Նրանում ասվում է, թե տարին ունի տասներկու ամիս և հինգ օր, հիսուներկու շաբաթ և մեկ օր, ամիսն ունի երեսուն օր,*

---

[16] *Նույն տեղում, էջ 208:*

[17] *Նույն տեղում, էջ 209:*

[18] Д. С. Л и х а ч е в (при участии А. А. А л е к с е е в а и А. Г. Б о б р о в а). Текстология на материале русской литературы X–XVII веков. СПб., 2001, с. 395.

[19] *Ա. Գ. Ա բ ր ա հ ա մ յ ա ն. նշվ. աշխ., էջ 92:*

[20] M. J. S a i n t - M a r t i n. Mémoires historiques et géographiques sur l'Arménie, t. II. Paris, 1819, p. 379.

և շաբաթը՝ յոթ օր, օրն ունի քսանչորս ժամ՝ ցերեկվա և գիշերվա համար, տարվա մեջ կա յոթ հարյուր քսան ժամ և օրվա քսանչորս ժամվա մեջ առկա է յոթ հարյուր քսան րոպե: Տարին կազմում է ութ հազար յոթ հարյուր վաթսուն ժամ կամ երկու հարյուր վաթսուն հազար ութ հարյուր րոպե, մի րոպեն հավասար է հինգ հարյուր ասպարեզ, *և* ասպարեզն *ունի վտավանի հեռավորություն. «Տարին ԺԲ ամիս է և Ե օր, ԾԲ շաբաթ և Ա օր, ամիսն Լ օր է, շաբաթն Է օր է, օրն ԻԴ ժամ է՝ ընդ տիւն և ընդ գիշերն…»*[21]*:*

Շիրակացի մանկավարժը երևում է նաև իր կազմած թվաբանական խնդիրներում: Դրանք շարադրված են շատ հստակ. խնդիրներում առկա են միջառարկայական կապեր՝ հատկապես աշխարհագրություն և պատմություն առարկաների հետ: Աշակերտներն այդ խնդիրների միջոցով ծանոթանում են Կոստանդնուպոլսի Սուրբ Սոֆիայի հռչակավոր տաճարի, փարավոնների երկիր Եգիպտոսի, Աթենքի, Մեծ Հայքի տարբեր նահանգների, հայ հայրենասեր իշխանների հետ:

Շատ ուշագրավ են Անանիա Շիրակացու հեղինակած խրախճանականները, որոնք իրենց զվարճալի բովանդակությամբ առավել հետաքրքիր ու բովանդակալից պետք է դարձնեին մարդկանց խնջույքի և ուրախության հավաքները: Այդ խրախճանականները սրամիտների հաղթանակն էին բթամիտների նկատմամբ և յուրօրինակ նախատիպն էին Ներսես Շնորհալու հրաշք հանելուկների, որոնք ևս ստեղծվել էին «վասն ուրախութեան մարդկան»:

Հայ միջնադարյան փիլիսոփայության հմուտ հետազոտող Սեն Արևշատյանը համոզված է, թե Շիրակացու ապրած օրերին՝ VII դարում, նա բնական գիտությունների իր բազմաճյուղ դպրոցը հիմնեց արդեն ձևավորված հայ փիլիսոփայական մտքի հիման վրա և գիտական նվաճումներով իր հերթին նպաստեց նոր գիտաճյուղերի զարգացմանը[22]*: Կարծում ենք, դրանցից մեկն էր նաև սուրբ Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի կողմից սկզբնավորված հայ մանկավարժական միտքը, որի փայլուն շարունակողն ու զարգացնողը դարձավ Անանիա Շիրակացին:*

Անանիա Շիրակացուն նվիրված վերջին աշխատություններից մեկում նա իրավացիորեն գնահատվում է որպես հայրենասեր դաստիարակ. «Շիրակացի-գիտնականը միաժամանակ ազգային-քաղաքական, քաղաքացիական և հոգևոր արժեքների և ձգտումների կրողն էր, մեծ հայրենասեր, նվիրյալ, որը ձգտում էր ազգի ոչ միայն գիտատեսական մտածողության և ուսումնակրթական մակարդակի բարձրացմանը, այլև գաղափարական, հայրենասիրական ոգով դաստիարակմանը»[23]*:*

---

[21] *Նույն տեղում:*

[22] С. С. А р е в ш а т я н. Формирование философской науки в древней Армении (V–VI вв.). Ереван, 1973, с. 23.

[23] *Կ. Մ ի ր ո ւ մ յ ա ն. Անանիա Շիրակացի, Երևան, 1998, էջ 27:*

АНАНИЯ ШИРАКАЦИ – ПЕДАГОГ
(К 1400-летию со дня рождения)

АЭЛИТА ДОЛУХАНЯН

Р е з ю м е

Самое выдающееся лицо армянской науки VII в.– Анания Ширакаци – был также и великим педагогом, основал свою школу, где учились желающие изучить математику и естественные науки. В армянской действительности Ширакаци первым создал учебник арифметики с 4-мя действиями, в поясняющих частях которого проявил особо четкое мышление и собственные методы обучения, присущие мастеру. Идеалом Ширакаци был его учитель Тюхик Византийский, которого он считал учителем от Бога. В своих сочинениях Ширакаци неоднократно повторяет, что путь к глубоким знаниям тернистый, но очень достойный. Ширакаци своей биографией указывает, какими должны быть настоящие учитель и ученик.

ANANIA SHIRAKATSI AS A PEDAGOGUE
(To the 1400th birth anniversary)

AELITA DOLUKHANYAN

S u m m a r y

Anania Shirakatsi, the most prominent representative of the Armenian science of the 7th century, was also a great pedagogue and founded his school in which he taught young and even not very young men who were eager to learn mathematics and natural sciences. Shirakatsi was the first scholar in Armenia who wrote a textbook on arithmetic containing the tables of four arithmetic operations. In its explaining parts Shirakatsi showed a peculiarly strict mentality and teaching methods of his own, proper to a great master. Shirakatsi’s ideal was his teacher Tukhik Byzandatsi whom he considered to be gifted by God. In his works Shirakatsi repeats more than once that the way to profound knowledge is hard, but honorable. Shirakatsi’s biography clearly shows how must be a real teacher and how a pupil.